



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԳՐԱԳԵՏ ՏՈՔԹ. ԲԱԲԳԵՆ ԲԱԼԵԱՆ-ՏԵՐ ՅԱԿՈԲԵԱՆԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ



Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ուրբաթ, 9 Յուլիսի կեսօրին, Ազգ. Առաջնորդարանի իր գրասենեակին մէջ ողջունեց այցելութիւնը ծանօթ մտաւորական Տոքթ. Բաբգէն Բալեան-Տեր Յակոբեանի, ընկերակցութեամբ անոր Տիկնոջ՝ Տոքթ. Սեդայի եւ եղբոր՝ Չաւենի:

Յարգելի հիւրերը Առաջնորդ Սրբազանին հետ ունեցան մտերմիկ հանդիպում մը: Անոնք լուսաբանութիւններ տուին բժշկութեան ու գիրի կալուածներուն մէջ իրենց կերտած վաստակին մասին, սակայն խորհրդակցութեան գլխաւոր նիւթը եղան

Արցախի վիճակն ու զարգացումները, մանաւանդ որ Տոքթ. Սեդա Պալեան այս մասին իր ապրած ցաւը գրաւոր կերպով յանձնած է մեր մամուլին: Բալեան ամուլը Առաջնորդ Սրբազանին յանձնեց յուշանուէր մը, որուն համար իր շնորհակալութիւնները յայտնելով՝ Առաջնորդ Սրբազանը հիւրերուն նուիրեց Ազգ. Առաջնորդարանին մասին վաւերագրական ժապաւեններ:

SCHOLAR BABKEN BALIAN-TER HACOPIAN VISITS THE PRELACY

On Friday, July 9th, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy scholar Babken Balian-Ter Hacopian, who was accompanied by his wife Dr. Seta and brother Zaven.

During their visit the guests detailed their endeavors within the medical and literary fields, however the conversation centered on the situation in Artsakh, given that Dr. Seta Balian has written her personal reflections on this topic which have appeared in our local media outlets.

At the end of their visit the guests presented the Prelate with a memento, and the Prelate in return presented them with DVD's chronicling the history of the Prelacy.